Մրցույթ՝ Երևանի «Ա. Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (22 դասաժամ), մաթեմատիկայի (78 դասաժամ), անգլերենի (23 դասաժամ), գերմաներենի (20 դասաժամ), պատմության (12 դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ), ֆիզիկայի (5 դասաժամ), կենսաբանության (5 դասաժամ), հայոց եկեղեցու պատմության (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ի մասին համապատասխան՝

  աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային

  գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող

  փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող

  փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2023 թ. դեկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. դեկտեմբերի 21-ին՝ ժամը 12:00-ին**, Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոցում. հասցեն՝ ք. Երևան, Արզումանյան 8: Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 39-10-70 հեռախոսահամարով: